ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.09.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/213

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մովսեսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մովսեսյանի (լիազորագիր՝ տրված 25.08.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2021թ. թիվ 26/26-1/12229-2021 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 22.07.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-5757 գրության հիման վրա, 30.07.2021թ. թիվ 26/26-1/12229-2021 գրությամբ նախաձեռնել է «Մովսեսյան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մովսեսյան» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Նշված ընթացակարգի վերաբերյալ հայտնում եմ, որ Մովսեսյան ՍՊԸ-ն 11.07.2021թ.-ին մասնակցել է ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/10 ծածկագրով ընթացակարգին, իսկ 13.07.2021թ.-ին մասնակցել է նաև հետադարձ աճուրդին:

16.07.2021թ.-ին, համակարգի միջոցով ստացվել է "դիմում-հայտում շտկում կատարելու մասին" ծանուցում, սակայն eauction.am համակարգի միջոցով հնարավոր չի եղել կատարել համապատասխան շտկումը, քանի որ անկախ մեր ջանքերից, համակարգը չի ընդունել կատարված շտկումները:

Ասվածը հավաստվում է https://www.youtube.com/watch?v=nG8eYMca1zw հղմամբ տեղադրված և կից ներկայացված տեսանյութով, որտեղ երևում է, որ մեր կողմից շտկումը իրականացնելու բազմաթիվ փորձերը համակարգի կողմից չեն ընդունվել:

Ելնելով վերոգրյալից, և հաշվի առնելով այն, որ Մովսեսյան ՍՊԸ-ն իր կամքից անկախ՝ համակարգի խափանման պատճառով չի կարողացել ներկայացնել պահանջված շտկումը,

Խնդրում եմ,

ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.07.2021թ. թիվ 26/26-1/12229-2021 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել»:

«Մովսեսյան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/213 ընթացակարգի շրջանակներում 18.08.2021թ. ժամը 09:20-ին և 25.08.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը 25.08.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստին, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.07.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-5757 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ Ձեզ է ներկայացվում Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում «Մովսեսյան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/213 ընթացակարգի շրջանակներում 18.08.2021թ. ժամը 09:20-ին և 25.08.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/213 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/213 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից իր կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մովսեսյան» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում էլեկրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) գործունեության հասցեն նշված է ոչ ամբողջական, ինչպես նաև ռուսերեն լեզվով մասնակցի անվանումը նշված չէ (նշված է մասնակցի հայերեն անվանումը), ինչպես նաև 1-ին չափաբաժնի մասով համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է ապրանքների չօգտագործված լինելու մասին տեղեկատվությունը, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ցանկացած հղման

դեպքում կիրառելի է ««կամ համարժեքը» արտահայտությունը», նախադասությունը ավելորդ է:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 16.07.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2021թ. թիվ 26/26-1/12229-2021 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 22.07.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-5757 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի 27.08.2021թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպես, ՀՀ դատական դեպարտամենտի կողմից իր կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մովսեսյան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.07.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում էլեկրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) գործունեության հասցեն նշված է ոչ ամբողջական, ինչպես նաև ռուսերեն լեզվով մասնակցի անվանումը նշված չէ (նշված է մասնակցի հայերեն անվանումը), ինչպես նաև 1-ին չափաբաժնի մասով համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է ապրանքների չօգտագործված լինելու մասին տեղեկատվությունը, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ցանկացած հղման դեպքում կիրառելի է ««կամ համարժեքը» արտահայտությունը», նախադասությունը ավելորդ է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 16.07.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մովսեսյան» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ անդրադառնալով «Մովսեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված այն փաստական հանգամանքին, որ 16.07.2021թ.-ին,

համակարգի միջոցով ստացվել է "դիմում-հայտում շտկում կատարելու մասին" ծանուցում, սակայն eauction.am համակարգի միջոցով հնարավոր չի եղել կատարել համապատասխան շտկումը, քանի որ անկախ Ընկերության ջանքերից, համակարգը չի ընդունել կատարված շտկումները, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Ընկերության կողմից տրամադրված տեսանյութի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերության կողմից փորձ է արվում համակարգ ներբեռնել շտկված փաստաթղթերը ժամը 14:00-15:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 23.08.2021թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/13423-2021 գրությամբ դիմել է «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին և խնդրել հայտնել արդյո՞ք սույն թվականի հուլիսի 16-ին ժամը 14:00-15:00-ն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է eauction.armeps.am համակարգի խափանում, թե՞ ոչ:

Ի պատասխան նշված գրության «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն 27.08.2021թ գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով հայտնում ենք, որ 16.07.2021թ.-ին ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/10 գնման ընթացակարգի շրջանակներում ժամը 14:00-15:00-ն ընկած ժամանակահատվածում eauction.armeps.am համակարգում եղել է խնդիր համակարգ ֆայլեր բեռնելու հետ կապված, սերվերի կարգավորումներով սահմանված է եղել համակարգ ֆայլեր բեռնելու սահմանաչափ, որի արդյունքում մասնակիցը՝ ոչ իր մեղքով չի կարողացել ֆայլը վերբեռնել համակարգ: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ նշված ժամանակահատվածում որևէ այլ խափանում չի արձանագրվել, իսկ գրանցված թերությունը ուսումնասիրվել և շտկվել է «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի ծրագրային թիմի և ՀՀ ՖՆ տեխնիկական բաժնի համատեղ ուժերով»:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը ոչ իր մեղքով, այն է՝ համակարգի խափանման հետևանքով զրկված է եղել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքներն իրացնելու՝ սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը համակարգ ներբեռնելու և Պատվիրատուին ներկայացնելու հնարավորությունից, ինչը հանգեցրել է «Մովսեսյան» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելուն և մերժելուն:

Նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերության դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2021թ. թիվ 26/26-1/12229-2021 գրությամբ «Մովսեսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**